



Co-funded by the  
Erasmus+ Programme  
of the European Union

# AUA

*American University of Armenia*





Co-funded by the  
Erasmus+ Programme  
of the European Union

# Ուսումնական նյութ

Հայաստանի ամերիկյան համալսարան,  
Երևան  
29-30 ապրիլ, 2019

*Իրշատ Մադյարով*

*Համակից պրոֆեսոր, ծրագրի ղեկավար/ամբիոնի վարիչ*

# 1. Ուսումնառության համընդհանուր շրջանակ

Համընդհանուր շրջանակը նախատեսված է հասանելիությանը լայնածավալ աջակցություն ապահովելու համար և կարող է օգտակար լինել թե՛ հաշմանդամություն ունեցող, թե՛ չունեցող անձանց համար: Օրինակ՝ համապարփակ շրջանակի մոտեցումը յուրուրեքներին (Youtube-ի ակտիվ օգտատերեր) հայտնի է որպես «փակ ենթագրեր» (closed captioning):

# 1. Ուսումնառության համընդհանուր շրջանակ

ՈւՀԾ-ն ուսումնական պլանի մշակման սկզբունքների շարք է, որի նպատակն է սովորելու հավասար հնարավորություն ընձեռել բոլորին, կարող է օգտագործվել ցանկացած մակարդակի, աստիճանի կամ առարկայի մասնագետ մանկավարժի կողմից:

Ըստ Ուսումնառության համընդհանուր շրջանակի Ազգային կենտրոնի, «ՈւՀԾ-ն իրենից ներկայացնում է ուսուցման նպատակների, մեթոդների, նյութերի և գնահատականների մշակման մեխանիզմ, որն աշխատում է բոլորի համար. ոչ թե մեկ, բոլորի համար նախատեսված լուծում, այլ ճկուն մոտեցումներ, որոնք կարող են հարմարեցվել և համապատասխանեցվել անհատական կարիքներին:



## 2. Բովանդակությունը ներկայացնելու համար բազմատեսակ ռազմավարություններ կիրառել

ՈՒՀԾ-ի առաջին սկզբունքն ուսուցիչներին կոչ է անում «օգտվել նյութի ներկայացման բազմազան եղանակներից»:

Սա մտապահելով՝ հարցնում ենք. «Ինչպե՞ս եք նյութը ձեր ուսանողներին ներկայացնում»:

Դասախոսությունների, ընթերցանության, քննարկումների, գծապատկերային պրեզենտացիաների, տեսանյութերի և գործնական գեղարվեստական մոտեցումների միջոցով. ուսուցիչները տիրապետում են տեղեկությունների մատուցման բազմապիսի եղանակների: Չնայած սրանցից յուրաքանչյուրը կարող է օգտակար լինել, սակայն դրանց համակցումը կարող է ապահովել, որ բովանդակությունը բոլորին հավասարապես հասանելի լինի:

## 2. Բովանդակությունը ներկայացնելու համար բազմատեսակ ռազմավարություններ կիրառել

Վեցերորդ դասարանի հասարակագիտության ուսուցիչ Էշլին Սանդովալը նյութը մատուցում է ենթագրեր պարունակող տեսանյութերի ցուցադրման միջոցով: Այս կերպ բովանդակությունը հասանելի է դառնում մեկից ավելի՝ տեսողական և լսողական միջոցներով: Ենթագրերի ավելացմամբ բարելավվում է հասանելիությունը տարատեսակ սովորողների, այդ թվում՝ լսողական խնդիրներ ունեցողների, նոր լեզու սովորողների, ինչպես նաև կարդալու կամ գրելու հմտության բարելավման ուղղությամբ աշխատողների համար: Ներառական դասարաններում կարևոր է տեղեկությունները ներկայացնելու և սովորողներին ներգրավելու տարբեր միջոցներ կիրառել:



### 3. Սովորողներին հորդորել ք իրենց ինացածը բազմազան եղանակներով արտահայտել:

Քանի որ ՈԻՀԾ-ի երկրորդ սկզբունքը ուսուցիչներին կոչ է անում օգտվել «գործողության և արտահայտման բազմազան եղանակներից», հետևաբար, հարցնում ենք. «Ինչպե՞ս եք սովորողներին օգնում ըմբռնողություն դրսևորել»:

Սովորողների մի մասի համար արտահայտման և դրսևորման լավագույն ձևը գրելն է, մինչդեռ մյուսների մոտ ավելի լավ է ստացվում բանավոր ներկայացումը, որևէ դերակատարումը, կամ էլ արվեստի որևէ գործ ստեղծելը: Երբ նրանց հնարավորություն ենք տալիս իրենց գիտելիքն արտահայտել բազմազան միջոցներով, ապա պարզում ենք, թե ինչն է լավագույնս աշխատում նրանց դեպքում և հաճախ կարող ենք բացահայտել երբևէ չդրսևորված ուժեղ կողմերը:

### 3. Սովորողներին հորդորե՛ք իրենց իմացածը բազմազան եղանակներով արտահայտել:

ՈԻՀԾ-ի մասին իմանալուց հետո 8-րդ դասարանի անգլերենի ուսուցիչ Շանիկա Մաքքարթին որոշեց, որ պետք է «ավելի շատ տարբերակներ և իրենց նախագծերը ներկայացնելու ձևի ընտրության հնարավորություն տա աշակերտներին»:

Այդպիսով, նա նվազեցնում է անհանգստությունը և տեսնում, որ ավելի շատ թվով աշակերտներ են դասարանում որակյալ աշխատանք կատարում:



## 4. Պարզե՛ք, թե ինչն է առավել հոգեհարազատ սովորողներին և մոտիվացրե՛ք նրանց:

ՈԲՀՇ-ի երրորդ սկզբունքն ուսուցիչներին հորդորում է «ներգրավման բազմազան եղանակներ» կիրառել, ինչի համար կարող է որոշակի ստեղծարարություն և սովորողների հետ արտակից կապ պահանջվել: Չնայած, որ նյութերի բազմազանությունը և արտահայտչամիջոցները (թատրոն, արվեստ, տեսանյութ, համակարգչային ծրագիր) կարող են ներգրավել սովորողներին, սակայն դասերի շաղկապումն այն ամենին, ինչը հոգեհարազատ է նրանց, նույնպես առանցքային նշանակություն ունի ներգրավման համար:





## 5. Արտացոլե՛ք բազմազանությունը դասավանդման մեջ:

Կրթության կառավարման մագիստրոս, Սան Դիեգոյի համալսարանի շրջանավարտ՝ Թիֆընի Սոնդերսը, որը իրենց դպրոցի գրադարանավարին խնդրել էր հաշմանդամության և բազմազանության մասին ավելի շատ գրքեր տրամադրել դպրոցին և դասարանական գրադարաններին, ասում է. «Հաշմանդամության մասին խոսելը և այն որպես բազմազանություն դիտարկելը կօգնի մեր դպրոցական համայնքին, և, հուսով եմ, նաև այլոց, հասկանալ, որ բազմազանությունը «նորմալ է»»: Պատկերացրեք, թե ինչ ոգևորությամբ աշակերտները կկարդան Լերոյ Մուրի «Սևամորթ և հաշմանդամ արվեստի պատմություն 101» վերնագրով նոր մանկական գիրքը, որը պատմում է վաղ 1900-ականներից մինչև ժամանակակից սևամորթ, հաշմանդամություն ունեցող արվեստագետների մասին:



## 6. Աջակցե՛ք գործընկեր ուսուցիչներին սոցիալական արդարության հարցերում:

Ուսուցիչների համար կարող է դժվար լինել պայքարել այնպիսի խնդիրների դեմ, ինչպիսիք են կողմնապահությունը, անհավասարությունը, հակամարտությունը և սոցիալական արդարությունը: Մտահոգությունների հասցեագրման նպատակով ուրիշ ուսուցիչների հետ հաղորդակցումը կարող է օգնել մեզ մեր համայնքներում հաջողությամբ անդրադառնալ այդ թեմաներին:

Այս հարցերը հոգատարությամբ և հարգանքով ուսուցանելու և քննարկելու պարագայում աշակերտներին այս բազմազան աշխարհում հաջողության հասնելու մշտակայուն գործիքներով ենք զինում:



## 6. Աջակցե՛ք գործընկեր ուսուցիչներին սոցիալական արդարության հարցերում:

Երբ ուսուցիչները գնահատում են բազմազանությունը, իսկ իրենց դասարանային նյութերն ու ուսումնական պլանն արտացոլում են իրենց արժեքները, սովորողները կարողանում են քննադատական մտածողության հիմնական հմտությունները ձևավորել, որոնք աներկբայորեն կարող են դիմակայել նախապաշարումներին և ձևավորել կարեկցանք:



# Հարց և պատասխան

# Շնորհակալություն





Baghramyan 40, Yerevan, Armenia 0019  
00 374 00 000 000

[nektar\\_harutyunyan@edu.aua.am](mailto:nektar_harutyunyan@edu.aua.am)

[elen\\_grigoryan@edu.aua.am](mailto:elen_grigoryan@edu.aua.am)>

[www.aua.am](http://www.aua.am)

The American University of Armenia is accredited by the WASC  
Senior College and University Commission, 985 Atlantic Avenue,  
#100, Alameda, CA 94501, 510.748.9001.

Copyright © 2018 American University of Armenia

